

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ
Տարեկան . . 12 Պր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀԱՆ
Կրկն թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Պր.
Վեցամսեայ . . 7 "
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Ք Ի Ր

Ա Ձ Ք Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ծրանշարան տ.դր.
20 ւանդիս

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրոշիւնք եւս
չեմ տրուիր

ՈՒՍԻՄԱՆ ՈՒ ՄԵՆՔ

Եւրոպայի ու բոլորեակ աշխարհի պետութեանց մէջէն Ռուսիան այն տէրութիւնն է՝ որուն քաղաքականութիւնը մեզ ամենէն աւելի շահագրգռելու է. Ռուսիոյ տիրապետութեանը ներքեւ կապրի մեր ազգին մեծագոյն երկրորդ հատուածը. Ռուսիոյ մէջ հաստատուած է մեր եկեղեցական բարձրագոյն նուիրապետութիւնը, որը համարէն աշխարհի հայ եկեղեցիներուն վրայ կիշխէ ու հայութեան աչքին կանձնաւորէ ազգայնական պահանջներու գերագոյն ու տարտամ խորհրդանշանը. վերջապէս, Ռուսիան է որ, մինչ 30 տարի առաջ Եւրոպայի բոլոր պետութիւնները, ու Անգլիան մասնաւորապէս, անտարբեր, անզգայ, մեղապարտ հանդիսատեսները կըլային թուրքիոյ քրիստոնեայ ժողովուրդներուն յամբարար խող-խողելուն, Ռուսիան քրիստոնեաներու պաշտպանութեանը համար իր բանակները շարժան մէջ դրաւ, և Պուլկարիան ազատագրելով, միանգամայն Սան-Սթեփանոյի դաշնագրով հայկական խնդրոյն միջազգային տիեզերականութիւնը ստեղծեց. Ս'եր արդի դժբաղդ վիճակին մէջ, մինչ Եւրոպայի մէջ ոչ մէկ պետութիւն կը համարձակի Ռուսիոյ ձեռնպահութեանը առջնել՝ մեզի պէս քրիստոնեայ ժողովուրդը մը հովանաւորել, գուցէ աւելորդ չըլլայ պահմը քննել, կատարեալ պաշարիւնութեամբ ու առանց բորբոքումի, կրքի կամ կանխակալ կարծիքի, թէ պէտքը չէ՞ որ վերստին մեր աչքերը դէպի Ռուսիոյ դարձնելու ենք, որը միշտ թուրքիոյ քրիստոնեաներուն պաշտպանը ու ազատագրողը հանդիսացած է:

Ա.

Հայկական նահանգներու բարեկարգութիւնը ձեռք բերելու իրենց որոգումին մէջ, պարագայները այնպէս մը բերին որ հայերը հանդիսաւորապէս քամահրեցին թուրքիոյ քրիստոնեայ ժողովուրդներու

տիտղոսաւոր հովանաւորիչը Ռուսիան, ու դիմեցին պաշտպանութեանը Բիւրանական Դիւանագիտութեան, որը սակայն անցեալին մէջ միշտ ռիսերիմ հակառակորդը եղած էր Օսմ. կայսրութեանէ անջատուելով՝ ինքնօրէն կազմակերպութեամբ օժտուելու հետամուտ բոլոր քրիստոնեայ տառապեալ ժողովուրդներու. վերջէվ կայսրէն ու գերմանացի դիւանագէտներէն տակաւին շատ առաջ, Անգլիոյ քաղաքական բարձրաստիճան գործիչները, Հանինկ, Բսլմբստըն, Պիքընսփիլտ Եւրոպայի մէջ հիմը դրին թրքաւիրական լիրք քաղաքակնութեան, ընդդէմ Ռուսիոյ որը կը յանդէնէին թուրքերէ աւելի վայրագ, աւելի յետաձգեց հռչակել. «Յուսկան կոտորածներէ տասը տարի ետքը, կըսէ Տիգրան Երկաթ թուրքիոյ անցեալին ու ապագային վրայ հոյակապ ուսումնասիրութեան մը մէջ (տես լա թիւրքի Բեօ-Դէլ Վիլոն, Ռեվիւ տէ Ռեվիւ 1899 օգոստոս), անգլիացի բարոյիչները սկսեցին «բարի ու առաքինի» միտաւրմանին վրայ խօսքեր ընել, մինչ միւս կողմէ կը դատապարտէին ռուսագաւաններու կոշտ նախապաշարունակները»:

Ուրեմն մենք պատրանքը ունեցանք լրջօրէն հաւատալու թէ հրաշքով մը քրիստոնեայ ժողովուրդներու թշնամին՝ Անգլիա հայկական խնդրոյն կարգադրութիւնը իբր թէ ձեռք կառնէր, մինչ մեր քաղաքական գործիչները չէին անգիտեր թէ՛ նախ Անգլիա նախաձեռնութիւնը ունեցած էր Պերլինի վեհաժողովը գումարել ու Սան-Սթեփանոյի դաշնագրին մէջ հայերու վերաբերեալ յօդուածէն ջրնջել տալ ճշգիւ այն մասը, ուր «Հայաստան» բառին յիշատակութիւնը կար. բայց կիպրոսի դաշնագրով Անգլիա հանդիսաւորապէս կստանձնէր հայկական խնդիրը յաջողապէս կարգադրելու պատասխանատուութիւնը:

Ու Անգլիոյ այս պոռոտախօսութիւնները շրջուցին մեր խեղճ հայերը. ձգեցինք Ռուսիան, հայկական խնդրոյն ստեղծիչը, թուրքիոյ քրիստոնեաներուն դարաւոր

պաշտպանը, որը Ֆրանսական հանրապետութեան հետ ալ տիեզերական դաշնակցութեամբ մը կապուելով՝ Եւրոպայի ամենագոր պետութիւնը կը դառնար. դիմեցինք Անգլիոյ, որը թուրքիոյ հաւատարիմ պաշտպանը, ու քրիստոնեաներու մոլեգին հակառակորդը հանդիսացած էր. մեր յեղափոխական առաջին կողմնակի լոնտոն հաստատուեցաւ. մեր յեղափոխական թերթերը լոնտոն հիմնուեցան. վերջապէս, հայկական խնդիրը Եւրոպայի ծանօթացնելու հետամուտ մեր հայրենասէրները, Մինաս Չերազ, Պոլսալը և ուրիշներ, գործունէութեան կեդրոն ընտրեցին Անգլիան ու հոտ սկսան տպագրել իրենց հայապաշտպան, հայապատկերութեան ու գրքերը. Միւլենոյն ատեն մեր յեղափոխականները սկսան Ռուսիոյ դէմ հայհոյել, զայն վիրաւորել նոյն իսկ անոր ինքնակալին անհատական ու ընտանեկան կեանքին մէջն ալ. Ռուսիան արեւելեան «արջ» է ըսինք, Հայաստանը պիտի գրաւէ ըսինք, ու քարոզեցինք որ պատրաստութիւն տեսնենք անոր դէմ դիմադրելու, իբր թէ՛ եթէ նոյն իսկ Ռուսիոյ կողմէ Հայաստանի իրական վտանգ մը սպառնալու ալ ըլլար, մեր ձրի հայհոյանքները կարենային անոր առաջին առնել:

Բայց սրբիւնքը այն, ինչ եղաւ արդիւնքը. մեզի ինպատկինք քաղաքականութեան հետեւեցաւ Անգլիան, Պօլսնբուր, Հնդկաստանի միլիոնաւոր բնակիչներու այն վայրագ խողնողիչը, որը, ինչ հեզնութիւն, տիեզերական քաղաքակրթութեան ռահմիւրան կը համարէինք: Արդիւնքը սա եղաւ որ, հայկական կոտորածներու ամենէն հրատապ միջոցին, Անգլիա յամառաբար մերժեց խօսքով թուրքիոյ սպառնալէ աւելի բան մը ընել. Սօլպպերի Մարքիզը, Սուլթանին յայտնապէս սպառնանացող այդ զաւաճ ծերունին—որուն բազմամեայ քաղաքական պաշտօնավարութիւնը թրքաւիրութեան տողանցութիւն մը կը ներկայացնէ, ու, ինչպէս Մ. Չերազի յիշատակագրութիւններէն կը տեսնուի, պահանջողականներու մէջ առաջինը եղած է Հայերու հակառակորդ—

պաշտօնական հացկերոյթի մը մէջ համեղ կերակուրներու բոլորէն արքալիւ, շաւրանեալով գինովցած, լրբօրէն յայտարարեց թէ անգլիական յաժանաւերը անկարող էին մինչեւ Հայաստանի լեւեռներու գագաթը բարձրանալ:

Անգլիան, Ռուսիոյ արտաքին գործերու նախարարը, իշխան Լօպաչօֆ, օգտուելով Ռուսիոյ դէմ հայ յեղափոխականներու սպառնալիքներէն, ռուսական արքունիքին ու ինքնակալին դէմ անարգական հայհոյանքներէն, դանոնք ներկայացուց իբր ամեն կազմակերպութեանց թշնամի, իբր բացարձակ անիշխանականներ, ու մինչեւ Պանքայի ցոյցը—որ ատեն յանկարծամահ անհետացաւ—Ռուսիան մղեց հակահայկական ծայրայեղ քաղաքականութեան մը, իրեն հետ քշելով Ֆրանսան ալ, որը կը խորշեր իր նոր դաշնակցին ու է դիմագրութիւն ընելէ:

Ասոնց զուգահեռաբար, Կովկասի հայ բնակչութիւնը ամենամեծ սեղմումներու սկսան ենթարկուիլ. հայ դպրոցները փակուեցան, կաթողիկոսական ազդեցութեան ու իրաւասութեան շրջանակը սահմանափակուեցաւ, պետական ասպարէզներու մէջ հայերու մուտքը արգիւտեցաւ, ու նոյն իսկ բարեգործական ընկերութեանց գործունէութիւնը խոչընդոտի հանդակցաւ:

Բայց, ո՞վ կըսէ թէ այս ամենքը այսպէս տեղի պիտի ունենային, եթէ ճարգիկութիւնը ունենայինք աւելի շրջահայեաց, աւելի փափկանկատ գտնուիլ Ռուսիոյ նկատմամբ, որմէ, ինչ որ ալ ըլլայ, մեր բախտը անխուսափելի չ'երպով կախուած է. ո՞վ կըսէ թէ Ռուսիան Հայերու ռիսերիմ հակառակորդը պիտի ըլլար, եթէ անոր դէմ ապերախտ գտնուելով, չի մոռնայինք թէ հայկական խնդիրը առաջին անգամ ստեղծողը Ան էր:

Բարեբախտութիւն մըն է որ մեր գործիչներէն ոմանք սկսած են այս բանը ըմբռնել ու այժմ դոնէ սկսած են—լաւ է անագան քան երբէք—զգուշանալ հակառուս ձեռնարկներու մասնակցելէ. ի բաւ է:

Դրոշակ Ռուսիոյ դէմ հայհոյելու գիւրիւն գործէն զատ բան մը չի գիտեր. բայց Մինաս Չերազ, Անգլիոյ մէջ հայկական գործունէութեան ամենէն շնորհալոյսներէն իր Լ'Արմենիէի հրատարակութիւնը Բարիզ փոխադրեց, յատկապէս վասն զի «ինչ որ Ֆրանսայի մէջ ցանկնք Ռուսիոյ մէջ պիտի քաղենք» համոզումով գերազանցօրէն ռուսասէր քաղաքականութեան մը յարեցաւ, որուն հետեւածքով ռուսական ամենամեծ օրաթերթերու համակրանքին ու պաշտպանութեանը Հայերը արժանացուց: Մինչեւ իսկ Նոր կեանքի մէջ Ռուսիոյ մոլեգին թշնամի Ա. Արփիարեան՝ նորոժագ Հայ Հանդէսի մէջ վերջացուցած է ալ Ռուսիոյ դէմ իր անօգուտ—եթէ հիմնադր իսկ ըլլած—յարձակողական հրատարակութիւնները, ու նոյն թերթին երրորդ համարին մէջ լըրջօրէն նկատողութեան կառնէ Ռուսիոյ կողմէ Հայաստանի բարեկարգութիւնը խնդիրը:

Իրաւ ալ, քանի որ Ռուսիոյ դէմ քաղաքականութեան մը հետեւելով բան մը չենք շահիր, ինչ պիտի կորսնցնէինք ռուսասէր քաղաքականութեան մը յարեւով կամ ինչ կրնայ ինքականակալ. ահա խնդիր մը որուն վրայ յառաջիկայ յօդուածի մը մէջ հանրութեան ուշադրութիւնը պիտի հրաւիրեմ:

Տ. ԷԼՄԱՍԵԱՆ

ՕՐՈՒՆԱՆ ԲԱՆԱԲԱՍԱՆՈՒԹԻՒՆԸ

ՀԱՆՈՒՑՈՒ ՏԷԼԲԱՍԷ

Բոյ Արմենիայի քաղաքացի խմբագրապետը, որ այնքան անձնուէր յամառութեամբ մը միջազգային մասունքին մէջ, հայաստան գործունէութիւնը մը ցոյց կուտայ, Լ'Արմենիէն շարժաթերթին վերջին համարին մէջ հրատարակած է նախա-յօդուած մը, որուն մէջ անգամ մ'ալ ազդուօրէն կը մատնանշէ բովանդակ Ֆրանսայի, արտաքին գործերու նախարար Նախարար Կապրիէլ Հանօգոյի հայկական կոտորածներու միջոցին ունեցած շիւ ու խարդախ վարմունքը: 1898ին էր որ այս ֆրանսացի քաղաքագետը հարկադրուեցաւ դիւանագիտական ասպարէզը Մ. Տէլքասէի թողուլ, երբ երեսփոխանական նոր ընտրութիւնները զլանալով՝ քուէներու մեծամասնութիւնը մը Ժիւլ Մէլիին նախագահած դաշինքին—որուն Հանօգոյ կը մասնակցէր—իշխանութեան կը կոչէր Հանրը Պոստը:

Բիէն Բիյառ, վաւերաթուղթերը, զեպանական զանազան զեկուցումները ձեռքին մէջ, ու ապա ինքնով թրքական գործերուն վրայ կառավարութեան հրատարակած «Դեղին Գրքերու» մանրամասն արտադրութեանը, ցոյց կուտայ թէ ինչպէս Կապրիէլ Հանօգոյ, կոյր գործիք մը Ռուսիոյ արտաքին գործերու նախարար՝ իշխան Լօպանովի ձեռքին մէջ, կը ջանար միշտ խնդիրները քննարկել, թաղել, անտարբեր վարմունք մը ունենալ հայկական կոտորածներու տեւողութեանը միջոցին, զէպերու մա-

սին ֆրանսական խորհրդարանը կատարեալ տգիտութեան մէջ պահել, վերջապէս «Դեղին Գրքերու» մէջէն—որոնց հրատարակութիւնը չափազանց ուշացուցած էր, ու ինչպէս Տը Մուսու ժողով 1896ին Երեսփ. ժողովոյ մէջ զիտել տուին, ֆրանսացիները հարկ կը տեսնէին հայկական խնդիրներու ծանօթանալու համար Անգլիոյ «Կապոյտ Գրքերու» գիտել—«Դեղին Գրքերու» մէջէն վերցնել «ծանրակշիռ» հանգամանք ներկայացնող բոլոր իրողութիւնները, այս ապրիլ տին դէմ յայտնուած մեղադրանքները նոր չեն. արդէն 1896ին ընկերվարականներու վարիչը՝ Ժողով Ֆրանսայի Երեսփ. ժողովոյ մէջ ազդու ճառ մը խօսած էր, հրաշակերտ պերճաստեղծութեան ու անխառնութեան՝ դէմ զգացուած զայրոյթի մը, ուր զայն հրապարակաւ Մուսուին «մեղադրեց» կը կոչէր: Ուրիշ չէր Բառի համալսարան ամսականի մէջ, Էնէստ Լափիս, անգամ Ակադեմիոյ ու Ֆրանսական համալսարանին մէջ ժամանակակից պատմութեանը ուսուցչապետ, ժամանակին կը գրէր. «Երկու նախարարներն ալ (Հանօգոյ ու Լօպանով) կոտորածները որակելու համար միեւնոյն բացատրութիւնները կը գործածեն. «միջադէպ», «գիպտած», որոնց համար կերեւալ թէ երկու մշտքերն ալ զգայնութեան յոգեմեծութիւն իսկ խոսովոր»: Ուրիշ չէր Մուսուին ընէր՝ Ժան Ֆրանս Հանօգոյ կամ Լօպանովի մեղքը իրողութեանը անտեղեկակալ նախադրութեանը անտեղեկակալ նախադրութեանը լիովին քայքայած ըլլալուն համար: Ֆրանսիս տը Բոնսանսէ, Թան օրաթերթի քաղաքական բաժնին խմբագրապետը, հրապարակաւ «լիբր» կամուանէր Հանօգոյ—իր նախկին բարեկամը, ուրկէ ներշնչուելով Հայերու անպատեմ մէկ քանի յօդուածներ ժամանակին գրած էր: Իսկ այս ամառ Բարիզի մէջ կին մը խաբած ու յետոյ լքած ըլլալուն համար, Կապրիէլ Հանօգոյի միջնակ իսկ Ակադեմիոյ մէջէն արտադրուող պահանջեց Մարիէի մէջ Մ. Հարտուին:

Այս ամէնքը լաւ. բայց ասոնց բոլոր վերջապէս անցեալ զէպերու կը վերաբերին. մեզի համար շահագրգռականը, կարեւորը սա է թէ Ֆրանսայի արդի արտաքին գործերու նախարարը՝ Մ. Տէլքասէ՝ ինչ ջուրերու վրայ է. իր նախորդէն տարբերութիւն մը կը ներկայացնէ՝ ազդուած է անոր քաղաքականութեանը մասին յայտնուած քննադատութիւններէ. անոր պէս խորհրդարանին անդամները կը խաբէ՝ վերջապէս ոգեւորուած է Հայերու նպատակաւ գաղափարներով. հարցեր որոնք չեն կարող մեզի անտարբեր թողուլ:

Տէլքասէի հայկական քաղաքականութեանը մասին Մինաս Չերազ իր Լ'Արմենիէի մէջ ներբողներ միայն կը գտնէ. քիչ մը աւելի տարբեր է Ա. Արփիարեանի կարծիքը: Այս վերջին հրապարակագիրը, որ իր բազմամայ գործունէութեանը շնորհիւ մեր մէջը քաղաքական խնդիրներու ուսումնասիրութեան կողմէ ամենաբարձր հիշի նախութիւն մը կը վայելէ, Հայ Հանդէսի վերջին երկու պրակներուն մէջ՝ խօսելով հայկական խնդրոյ առթիւ Ֆրանսայի դերին ու քաղաքականութեան վրայ, մէկ քանի այնպիսի եզրակացութեանց կը յանգի, որոնք մեզի տարբերակ կը թուին:

Ոտելով Միտիլէնի գրաւումին մասին Ֆրանսայի Երեսփ. ժողովոյ մէջ Հայերու ի նպատակ յարուցուած վիճաբանութեանց վրայ, Ա. Արփիարեան կը յիշատակէ Մ. Տէլքասէի յայտարարութիւնները ու կեզրակացնէ.

«մեծ տխմարութիւն է կարեւորութիւն չընծայել Պ. Տէլքասէի նման հեղինակաւոր ու նաեւ հայաստի նախարարի մը քաղաքական յայտնութեանը»: Հայաստէ՛ր Մ. Տէլքասէն. քաղաքական խնդիրները զատելու մէջ Արփիարեանի նման հրապարակագիր մը արժանիքը նժարին մէջ ինչ կշիռ որ ալ ունենայ, պիտի ներուի որ մեր բոլոր ուժովը Տէլքասէի վերադրուած այդ «հայաստէր» բառին դէմ բողոքենք. մեր համոզումովը, Տէլքասէ ոչ միայն հայաստէր մը ներկայանալէ հետոյ է, այլ եթէ խնդիրը խորապէս ուսումնասիրէնք, զժողովարար տարբերութիւն մը պիտի կրնայինք որոշել Հանօգոյի յայտնապէս թրքասէր քաղաքականութեան ու Տէլքասէի հակահայ վարմունքին միջեւ. միակ նշանակելի տարբերութիւնը դուքէն այն ըլլար որ, մինչ Հանօգոյ լիբր համարձակութեամբ մը զէպերը կը խնդրէր, իրողութիւնները կը յայտաէր, ճշմարտութիւնները կայաւորէր, Տէլքասէ, իր նախորդէն շատ աւելի ճարպիկ ու շրջահայեաց, կեղծ հայաստէրի գիմակի մը տակէն է որ մեր խնդրոյն ամենէն մահացու հարուածները կուտայ. գեր-ծովակալ Գայաթի Միտիլէնը գրաւած միջոցին երբ Ֆրանսայի Երեսփ. ժողովոյ մէջ Հայերու վրայ հարցապնդում կը ըլլար, Մ. Տէլքասէի յայտարարութիւնները—մինչ տակաւին Հայերու նկատմամբ երեսփոխաններու բարեկամակամ արտադրութեանը անտեղեկակալ նախադրութեանը—վատութեան, խարդախութեան, խնդրութեան միջոցով յայտարարութիւններ եղան. կը յիշուի ընկերվարական Մատիլ Սէնյայի ու պահպանողական Տընի Գոշէնի կողմի հարցապնդմանց իբր պատասխան՝ Տէլքասէի առաջին խօսքերը. որոնք Հայերու նկատմամբ անոր հոգիին թագունալքերը կը մատնեն. «է՛հ, միշտ Տօն-Գիշօթութիւնը պիտի մարմնաւորենք», (ե, նու զեկնաւորուող զոժուր չը զօնիշօթ): Այս մէկ հայաստաց, ոչ իսկ Հանօգոյն, ոչ ալ Լօպանովը հաղարար Հայերու ողջակէզին նկատմամբ այս աստիճանի լիբր ու անգամ բացատրութիւն մը գտեր էր. այս պատճառաւ արտաքին գործերու նախկին նախարար Մ. Ֆլուրէնս անորից պէս Տէլքասէի այդ խօսքերուն դէմ բողոքեց. Տէլքասէն ալ Գոշէնին, Լաշէի իրաւարար միջազգային Ատեանին անգամ ու մեծապէս ազդեցիկ երեսփոխան, Թանի ու Լաքի մէջ այս տոթիւ գրեց. «նախարարին շրջունքներէն իշնող զժողով խօսքերէն ետք...»: Ֆրանսիս տը Բոնսանսէ, որ քաղաքական ամենամեծ հեղինակութիւն մը կը վայելէ, Օնօրի ու Բոյ Արմենիայի մէջ Հանօգոյի ու Տէլքասէի քաղաքականութեանց միջեւ տարբերութիւն մը կը չէր գտնէր, ու Ժանէլ իր հայաստապետ հրապարակախօսութեանը մէջ կը ըսէր հիգնօրէն. «Ֆրանսա մեր ժեց Տօն-Գիշօթութիւնը մարմնաւորել. Մ. Տէլքասէ շարժման մէջ գրաւ նաւաստիներ, ծովակալներ, նաւաբաժնիներ, գերմանացի երկու վաշխառուներու հաշտին» (բառ ինչ ֆուրը ինչպիսիք ժեռնալիզէ...): Մ. Տէլքասէ ֆրանսական խորհրդարանին մէջ Հանօգոյի պէս հայկական տառապանքներու իրականութիւնը ուրացաւ, մերժեց նկատողութեան առեւել հայկական նախադրութեան վրայ ձեւ ունեցնել իրականութիւնը, չնայեց թուրքիոյ մէջ Հայերու փոքրամասնութեան հանգամանքը—ինչպէս Հանօգոյ ալ ըրած էր. վերջապէս, Մարտի Սէնյայի ու Կիւսազով Ռուսիայի հարցապնդմանց

իբր պատասխան, Մ. Տէլքասէ հայկական խնդիրը լուծելու անկարողութեանը իբր միակ լիբր առարկութիւն, Ֆիլադալփի խառնակութեանց բանադադունքը մէջ բերաւ, ճիշդ. Հանօգոյին պէս, մինչդեռ Բիյառ Բոյ Արմենիայի մէջ ու Տը Բրէսանսէ Պոլսէլի հայաստէրներու համաժողովոյ մէջ իրաւամբ գիտել տուին թէ Կրէտէի խնդիրը, որուն նկատմամբ ալ նոյն ձեւով առարկութիւններ կընէին «նեղացուցիչ» խնդիրները թաղել ուզող դիւանագէտները, առանց միջադէպի կրցաւ կարգադրուիլ. կարելի էր այս նկատողութիւնները աւելի երկարել ու Տէլքասէի ճառերուն վրայ աւելի մանրամասն քննադատութիւն մը ներկայացնել. կը բաւէ ըսել թէ եղբակացութիւնը որուն կուզենք յանդիլ՝ սա է թէ Ֆրանսայի արտաքին գործերու նախարարները Հայերու ի նպատակ իրենց քաղաքականութիւնը երբէք չեն փոխած. վասն զի բացարձակ հիմ եւ սկզբունք ընդունած են Ռուսիոյ հետ համախորհուրդ գործակցութիւն մը, ինչպէս Ժորժ Գլէմանսո իր Պիոյին մէջ կը բացատրէր. Ֆրանսա, հակառակ իր բարեգրական տրամադրութեան, մեզի հայտնակ պիտի ըլլայ, որքան ատեն որ Ռուսիա մեզի անպատեմ քաղաքականութեան մը հետեւի. ուրեմն, ինչպէս մեր այսօրուան խմբագրականին մէջ ըսուած է, ամէն բանէ առաջ Ռուսիոյ բարեկացականութիւնը ձեռք ձգելու աշխատելու ենք, եթէ կուզենք Ֆրանսան ալ գրաւել. Ռուսիա ու Ֆրանսա. հայկական խնդրոյն լուծումը այս երկու պետութեանց ձեռքն է. այս տեսակետով կատարելապէս գրուած թէ Անգլիայէ նախընտրաբար Ֆրանսայի մէջ գործունէութիւն մը; զոր Արփիարեան կը քննադատէ. Ֆրանսայի մէջ աշխատող մեր հայերեսէրները—կը բաւէ որ ընկերվարական կամ ծայրայեղ կուսակցութեանց օժանդակութիւնները զգուշանան—իրենց գործունէութեան արդիւնքը Ռուսիոյ մէջ պիտի քաղեն:

Տ. Է.

ԴՐՈՇԱԿԵԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՆ ՄԸ

Հայ Հանդէս կիսամսեակը, զոր վեհաժողովի մէջ կը հրատարակեն Ա. Արփիարեան ու Լ. Բօշալիան, Արփիարեանի մատնութեան ծանօթ խնդրոյն առթիւ իր վերջին պրակին մէջ հետեւեալը կը պարունակէ.

Օգոստոս 15ին վերջին յայտարարութիւնս ըրած էի. Դաշնակցական կուսակցութեան պաշտօնաթերթին մէջ հրատարակուած կեղծարարութեան եւ զրպարտութեանց մասին: Երկու ամսուան պայմանաժամը լրացած ըլլալով, առանց ու եւ պատասխանի մը սկսած եմ իմ ձեռնարկներս ընել: Պիտի գործեմ հանդարտօրէն եւ աստիճանաբար: Ամենամանր հետեւանքներու պատասխանատուութեանը մէջ պէտք չէ որ ամենաթիւն բաժնի մըն ալ ինծի վերադրուի: Դաշնակցական կուսակցութեան պահած խոր լուծութիւնը արդէն ինքնին խոստովանուած թիւն մըն է: Իրենց զրպարտութիւններէն եթէ մէկ հասն իսկ ճշմարտութիւն եղած ըլլար, պիտի փութային դիմադրուել: Տարակուս չունենանք որ «Մեւադէր»-ի հրամանները՝ Գոլովպոս եւ ընկերութիւն (Դեռ այսօրուան համար ծածկա-

նուսնով (սօսինք) դատապարտուելու ստուգութիւնը ակնհայտ տեսնելով, ամէն ջանք կընեն որ գործը լուծեամբ խղճեն: Զուր չանք:

Մեզի տակաւին անձանթի կը մնայ թէ ի՞նչ են այն «ձեռնարկները», որոնց Ա. Արփիարեան սկսեց է, իր պատիւը պաշտպանելու համար. ի՞նչ որ ալ սակայն անհնաւ եղած ըլլան, Ա. Արփիարեան վատահասարակ թող գիտնայ թէ, ի՞նչ գտնուեցան վատագի արաւ. բաժներ՝ որոնք այսօր Գարշիւի ու ապերախութեամբ մը ընկնող ըստ ըստ գործունէութիւն ներկայացնող տաղանդաւոր գործիչի մը պատուոյն ու արժանաւորութեան վերաբերութեամբ, միւս կողմէ ալ հրապարակ եկան նոյնքան յաճախ անհատներ, որոնք պէտքով միայն կըրցան նկատել բովանդակ հասկնալի ամենաբարձր հրապարակագրին դէմ գտուած այդ կեղծարարութիւնը:

Բայց, մասնաւորապէս իրաւունք այս խնդրոյն հաւատարիմ ախոյեանը մնաց, ու ինչով կը պարծի ալ. անշուշտ, Արտասահմանի մէջ շատ թերթեր Արփիարեանի նկատմամբ Դրօշակի հրատարակած խառնաշփոթ յանդիմանները դատապարտեցին. սակայն, միջադեպ տեսնելով ոմանք զայրոյթի առաջին հրատապ վարկիւններէ ետք հետք չեն թողնել թուլացան, և կամ, ինչպէս Ալեքսիսը, ծառայելով անհատական ստորագրի հակառակութեանց, առաջնորդուելով կողմնակցական ազդեցութիւններէ, անսովորաբար զոհեցին իրենց հովանաւորած սկզբունքները, ու դասակարգները եղան խնդրոյ մը զոր այնքան ուժգնութեամբ մերթ կը պաշտպանէին, թող ներսի մեզ

ըսել թէ, մեր թերթը՝ իրաւունք, սահմանափակուած իր համեստ կարողութեանը շրջանակին մէջ, կը կարծէ իր պարտաւորութիւնը լիովին կատարած ըլլալ սկզբունքի ու պատուոյ այս գերազոյն խնդրոյ նկատմամբ:

Կատարելապէս համոզուած որ Ա. Արփիարեանի խնդիրը, հեռի անհատական խնդրոյ մը հանգամանքը ներկայացնելէ, ազգային արժանապատուութիւնը, հանրային պատիւը բարձրորէն շահագրգռող խնդրոյ մը համեմատութիւնները կը ներկայացնէ, յաջորդաբար երկու որոշ ուղղութեանց հետեւեցանք. նախ, կատարեալ անկողմնակալութեամբ, ոյժ տուինք Արփիարեանի դատելու պաշտօնով չեզոք տարրերէ բաղկացած Պատու Առեանի մը կազմութեան. բայց երբ ապշութեամբ տեսանք որ, մինչ Արփիարեան կը հաւանէր յօժարակամ Պատու Առեանին կազմութեանը ու որոշումին համակերպել, ընդհակառակը Դաշնակցութիւնը, սարսափելով իր ամբաստանութիւնները չեզոք ու անկողմնակալ անհատներու քննութեանը ենթարկելու հեռանկարէն, վատաբար կը խուսափէր լուսաբանութենէ ու ազատ փիճաբանութենէ. երբ որ տեսանք թէ, ողորմելիները անզօր կը զրտնուէին հրապարակաւ, բաց ճակտով ապացուցանելու գոնէ մէկ մասը այն ամբաստանութեանց, զոր այնքան կտրիճութեամբ թուղթի վրայ, կընեն, ա՛հ. այն ատեն խնդիրը մեզի համար ալ ունէ գաղտնիք չուէր. հետեւապէս, այս էջերուն մէջ սկսանք արդարութեան ու յղափոխութեան անուանով այս հրէշային անիրաւութիւնը գործողներու դէմ կորովի, անողորմ, յամառ պայքար մը, զոր

հպարտ ենք մինչեւ այսօր կարենալ շարունակելու. անցեալ թէ ներկայ ոչ մէկ ծանօթութիւն, ոչ մէկ կապ մեզի Ա. Արփիարեանի կը մօտեցնէր, ու միմիայն ճշմարտութիւնը, արդարութիւնը ըսելու ոգեւորութեամբ դատապարտելով դատապարտեցինք, նշաւակելով նշաւակեցինք այս պարբերականի կեղծարարութիւնը ընդ Դաշնակցականները, ինչպէս որ նոյն անաչառ սնկողմնակալութեանէ առաջնորդուած, նոյնքան յամառ անողորմութեամբ պաշտպանեցինք դրօշակեան զրպարտութեանց ուրիշ զոհեր ալ—Ճգնաւորեան, Գաբրիէլեան, Խսկէնտէր, Զօպանեան, և այլն:

Մինչեւ այսօր հաւատարիմ մնացինք ու հաւատարիմ պիտի մնանք ժողովուրդը խաբողները դիմակալութեանը, զանոնք անընդհատ հալածելու, հետապնդելու մեր սկզբունքին, թէեւ այսպիսի յամառ որոշում ընդհանրապէս մեր կեանքն ալ ստորագրուած պատրաստ ենք:

Տ. ԷԼՄԱՍԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Առանայի Ընտր. Ժողովոյ մասնակցող Կիլիկիայի պատուիրակները, Տ. Սահակ եպիսկոպիտ ընտրութեան վաւերացուելուն լուրը առնելով, իրենց տեղերը մեկնելու սկսեցին:

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

(31)

ԹԻՍՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՊԵՏԱԿԱՆ ԿԵՏԻՒՆԻ ԿՈՒՆԻԸ

Վանական, որ մինչեւ այն ատեն քուրտերէն լեզուով խօսած էր թէ՛ Շէյխին եւ թէ՛ մանկամարդ աղջիկան հետ, ճիշդ մը ըրաւ, ու ջանաց իր հոգեւոր ամբողջ խողովը զսպելու: Յետոյ բարձր ձայնով մը ըսաւ.

— Շէյխ, քու գլուխդ ոտքերուս տակ պիտի գտնես օր մը, եթէ այս վայրկեանէն, առանց ետեւեւիդ գառնալու, Օսման պէկին գտնուած տեղը չերթաս: Այսպէս կըսեմ: Հիմակ նստեցէ՛ք սմէնքդ ալ ձերբուն վրայ ու հեռացէ՛ք:

Շէյխին չուանը քակելով թողուցին որ ձիւ հեծնէ:

Արդարեւ, կէս ժամուան մէջ կիրճէն անհետացաւ Շէյխին խումարը. իսկ հայ աղջիկը Վանականին քով մնաց:

Վանական ընկերներուն գառնալով մըմնջեց.

— Ահա՛ մեր առաջին յաղթանակը: Կը տեսնէ՞ք:

ինչքան վատ է մեր թշնամին. մինչեւ իսկ ձորին մէջ սատկած շուներն մարմինը չթաղուեցաւ...
Ու հրամայեց որ կիրճէն մեկնէին դէպի Արսուր սարին կողմը:

ՎԵՃԱՓԱՌԸ...

Իրիկուան ստուերները կամաց կամաց կ'ընէին Վանայ ձովուն վրայ, որ հանդարտ ու միասպառ երեւոյթի մը տակ կը քնանար կարծես: Զէր երեւար ձովուն արեւմտեան—հարաւակողմը բարձրացող շղթայ լեռներու երկանքը, չէր երեւար հսկայ Սեփան կոչուած սարը. միայն՝ ալիքներու հետաւոր ձայնը կընդհատէր խոր լուծիւնը:

Այդ պահուն, Աղթամարայ կղզիին եզերքը փոքրիկ նաւակ մը կանգ կառնէր, ուսկից երեք հոգի ցամաքը կ'ընէին:

Այդ անձերը մեր ծանօթ ներսէս Արծրունին, Ռ. սուրբիչը եւ Վանական էին:

— Կարելի է Վեհափառը շրջագայելու ելած է, մըմնջեց նաւակը թիավարող մշակը.

— Դիտէ՛ք թէ ո՛ր կողմը կ'երթայ, հարցուց ներսէս Արծրունին.

— Դիտեմ, պատասխանեց մշակը:

— Ուրեմն, առաջնորդէ՛ մեզ:

Մշակը նաւակէն դուրս ելաւ ու Վեհափառին ամենէն սիրած վայրը դիմեց:

Արդարեւ, վանքին յետնակողմը, ժայռերով շրջապատուած ձովակին վրայ նստած էր հսկայ

— Սիվրի Հիսարի 15 բանտարկեալներ, որոնք դատուելու համար Էնկիւրի փոխադրուած էին, դատուելով անպարտ հռչակուած են:

— Մեր նախորդ թուով ծանուցած էինք թէ բարեսէր տիկին մը Արմաշի Դպրեվանքին 600 ոսկիի նուէր մը ըրած է. այդ տիկնոջ անունն է Վասիլուհի Մարկոսեան:

— Բաղէշի առաջնորդ ընտրուած է Խարբերդի Պատ. փոխ. Տ. Եղ. Նիկ վրդ. Գալփակճեան:

Սիլիստրէի եկեղեցիին քահանայ Տ. Տաճատ մեկնած ըլլալով, Սիլիստրէի եկեղեցիին համար քահանայի մը պէտքը կայ. դիմել տեղւոյն թաղ. Խորհրդին:

— Իզմիրի առաջնորդ Տ. Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատեան Բիշքանդիոնի տուած մէկ լուրին համաձայն, հրաժարելու մտադիր է. Իզմիրցիները կը փափաքին առաջնորդութեան հրաւիրել Տ. Գէորգ եպիսկոպոս. Երէցեանը որ Պոլսոյ մէջ մեծ ժողովրդականութիւն մը կը վայելէ. սակայն յայտնի ալ չէ թէ, այս եկեղեցականը որ կիլիկիոյ կաթողիկոսութիւնը մերժեց, այդ պաշտօնը ընդունիլ պիտի յօժարի:

— Պ. Պապեանի թատերախումբը շաբաթ երկու Սանդրալի մէջ ներկայացուց Համլէդը, որ Շէքսպիրի թատերական ամենաբարձր հրաշակերտն է, ու նուիրած գլխաւորաբար հոգեբանական ու իմաստասիրական կարգ մը խընդիրներու բեմական վերլուծութեանը. զայն յաջողապէս ներկայացնելու համար բաւական չէ միայն քիչ թէ շատ արժանիքի տէր ողբերգու մը ըլլալ. այլ անհրաժեշտ է մտաւոր բաւականաչափ զարգացում մը ունենալ ու թա.

մարմնով, ձիւնափառ ու երկայն մօրուքով, տարիքոտ ու մայրոյզ կերպարանքով մարդ մը, որ անթարթ կերպով ծովի ալիքներուն ու թանձր խաւարին վրայ կը նայէր:

Այդ մարդը Վեհափառ՝ Սալատուր Կաթողիկոսն էր:

Երեք անձերը յարգանքով մը մօտեցան Վեհափառին ու անոր ձեռքը համբուրեցին:

Մշակը հեռացած էր:

— Բարո՛ւ եկած էք, զաւակներս, ըսաւ Վեհափառը՝ մեծ մեծ բանալով իր խորաթափանց աչքերը:

— Շնորհակալութիւն, թոթովեց ներսէս Արծրունին:

Վեհափառը խորին նայուածքով մը քիչ մը հեռուն կեցող Ռ. սուրբիչը դիտեց, որ իրեն ծանօթ էր ու մըմնջեց:

— Պարոն Վահրամ, ներկայացուցէ՛ք ինձի այս անձերը:

Ռ. սուրբիչը, որուն Վահրամ անուն տուած էր Վեհափառը, յարգանքով մը մօտեցաւ ու վերապահութեամբ ըսաւ.

— Բարեկամներս Ազգին ու Հայրենեաց զինուորներն են, Վեհափառ:

— Աստուած պահէ՛ զանոնք, վրայ բերաւ ձիւնափառ մօրուքով կղերականը՝ քմահաճ ձայնով մը:

— Կը փափաքին որ քանի մը տեղեկութիւններ տաք իրենց, Վեհափառ, կրկնեց Պարոն Վահրամ:

(Շարունակելի)

փանծել խաղին իմաստասիրական ոգիին. Պ. Պապանյան որ անգլիա-գէտ մըն է, գնահատելի յաջողութեամբ մը համլէդի գերին մէջ փայլեցաւ ինչպէս նաեւ Օթէլլօի մէջ ալ յաջողեց եր :

Անկեղծօրէն կուրախանք տեսնելով որ վառնայի հայ հասարակութիւնը Պապանյան թատերախումբը քաջալերելու իր պարտականութիւնը հետզհետէ կը մըռնէ. շարժութ գիշեր օրինակի համար, թատերասրահը ամբողջովին գրաւուած էր. տարակոյս չունինք թէ Պ. Պապանյան, որ իր ազու նկարագրին համար արդէն մեր մէջը անսահման ժողովրդականութիւն մը կը վայելէ, միշտ մեր հասարակութեան հոյն քաջալերանքին պիտի արժանանայ :

— Յրանսիս Տը Բախանսէ, Յրանսացի երեսփոխան ու հայաստանեան միապետ յանձնախումբին անդամ, Բարիզի Օնօր թերթին մէջ «Հայաստանի համար» գերանագրով յօդուած մը հրատարակած է. այդ յօդուածին մէջ Տը Բախանսէ երկարօրէն ցոյց կուտայ թէ ինչպէս, հակառակ մեծ կոտորածներու արգիլելուն, հայ ժողովուրդին բնաջնջման գործը յառաջ կը մղուի. յետոյ տաճկահայ գաղթականներու ողբալի վիճակին վրայ խօսելով կըսէ թէ, հայ ազգին համակրող անձնաւորութիւն մը, որ իր անունը առայտով քողարկել կըզձայ, իր տրամադրութեանը ներքեւ 5000 ֆրանքի գումար մը դրած է, որպէս զի Տաճկահայ գաղթականներու ինպսոք գործածուի : Տը Բախանսէ նաեւ մը գրելով Յրանսայի արտաքին գործերու նախարար Տէլբասէին, կը հրաւիրէ զայն որ այդ 5000 ֆր. գումարը Պարսկական հողերու Յրանսական հիւպատոսներուն ուղարկուի, որպէս զի այդ դժբաղդ գաղթականները Պարսկաստան կարենան գաղթել. իսկ այն պարագային երբ Մ. Տէլբասէ մերժէր այդպիսի գումար մարդասիրական ձեռնարկ մը հովանաւորել, Տը Բախանսէ Օնօրի ընթերցողները կը հրաւիրէ որ իրենք նախաձեռնութիւնը ունենան իրենց նուէրներովը այս բարձրօրէն մարդասիրական գործը յաջողցնել :

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Պու կիւնլէրտէ Սթամպուլ կազմակարգըն հէման 3 երկզի Սուլթանըն վէլատէթի մինասիպէթիլէ իճրա օլընմըլ օլան շէնլիլէրին թէֆէրրուլթըլլա տօլու օլուպ պիր Սուլթան տէյէճէլէրի վագըթ, սէքիգ-օն սըֆաթ (ածական) իս թիմալ իթտիլէրինտէն, էկեր Սուլթան Համիտի հիշ թանըմայան պիր քիմսէ պու սըֆաթլարը

կէօրսէ վէ օգուսա, մուլլագ ա. նըն կէօքտէն էնմիշ պիր մէլէք օլմասընա զահիպ օլաճագ, Ֆա. գաթ պիզ անը պիլիբիզ, օնլար նէ եազարլարա եազարլար պիզ անըն մուգայիրինի անլարաճաղըլ, Չաթէն Լօրտ կլատրսթօն վէ էլ րօբա էրպապը սիյասէթի թարա. թընան քէնտիսինէ լոյրգ, վէ. լիլէն Գըրմըզը Սուլթան, վէ զայրը հոււ, հագիյիգ ոգֆաթլարը պիր լիբիզ, Պուլտան մատաա 300,000 լէրճէ տին զարաշլարըմըզըն վէ շիմտիքի հալտէ, Մաքէթոնիլը պուկար զարտաշլարըմըզըն, ինսան վիճտանը տայանմայաճագ տէրէճէտէ վէ էլաւի եուլընըլ՝ ձեկկիլէր վէ թիմաշլիկիլէր զէ. մանընտա սէպգաթ իթմիշ օլան էնվայի ինճիլաշլարըլ մահվ օլմալարը կէօպիլիզէ կէօրիպ վէ գուլարըմըզլա իշիթմէքտէիզ, վէ պիզ տախի մէրհոււ պիրտէրլէրիթիլէն էրվաճընտան (հոգններ) չըգան լանէթ սէտալարըլ նա իշիթրագ իթմէքտէիզ :

ՏԱՆԻՄԱՐՔԱ

Տանիմարքա հիւքիլմէթի քիւլիլիլէն նիսպէթէն, տէօվէթ. լէր՝ պախուսուս րուսիա վէ Ալմանիա ինտիտէ բէք պէօյիք պիր էհէմմիլէթի հաիզ պուլըն. մագտա տըր : Չիրա հիւքիլմէթէնը մէկքիլէրէն գուվէթի պահ. լիլէրի Պալթիգ տէնիլիտէ քեմալիէն մահֆուզ պուլընտըզընտան, պիր մուհարէպէ էնասըն. տա շըրհլարընըն խարիճէ չըգապիլմէսի՝ օլ քիւլիլէր հիւքիլմէթին եէտը իսթիյարինտէ (կա. խոււ ունենալ) օլտըղընտան մէկքիլ հիւքիլմէթիլէր, հալը հազըրտա անըն հիւսնի թէվէճէիլհիլի գազանմագտա, եէքտիլէրինէ բէգապէթ (մըցիլ) իթմէքտէ տիրէր : Չիրա աքսի թագտիրտէ ճէպրիս. իթմալ օլընսագ օլուսա՝ Տանի. մարքանըն մալիք օլուպ պահըր Պուլթիլիլ մալիլէրի (հիւ) օլան Սուլտ, քիւլիլէ վէ պէօյիլք Պէլլէ, Գաթէկաթ կիլի միւրուրի բէք միւլէրիլ օլան պօղազլարընտա, անլէրին էն միւլէմսէլ շըրհլար. ընը սուհուլէթիլէ մահվ իթմէսի մինհիլէ իլ տիր :

ՄԻԻԹԷՆԷՎԻԻԹԷ

Թանըն վերտիլի մալիլմաթա նազարէն, իսթանբուլն ճէնուպի շարգիսինտէ մուհարէպէ լիմանը օլան Գատիքս շէհրինտէ անալ. շիսթիլէրին պիր նիւմայիլինտէն գօրգըլմագտա տըր, զիրա անար. շիսթիլէրին թէշլիլիլիլէ ֆուրընճըլար էրմէք չըգարմատըզլարը կիլի, լիման թէրսիսանէսինտէ չալըլան իշիլիլէր տախի թաթիլը մէշղուլիլէթ իթմէք նիլիլէրինտէ պուլընթըլլար :

— Պու նոյ. այլըն 4ինտէ Գահիլէ պարուլթիսանէսինտէ գազաէն պիր իշիթալ (բորբոքու) զուհու.

րիլէ պարուլթիսանէ խարապ օլմըլ վէ 18 քիլի թէլէֆ օլտըղը կիպի բէք չօքտա մէհրուհ պուլընմագ. տատըր :

Քօրէնհակտան նոյ. 4 թարի. խիլլէ թաւա պիլտիրիլտիլինէ կէօրէ րուսիա իմէրաթօրը նիլ. քօլա հագրէթիլէրի, յունուար ալընտա տէնիլ թարիլիլէ Ռօմա. յա կիտէճէք իմիշ :

— Սէրպէրը Ֆիլմուռն կազէթա. սընըն վերտիլի մալիլմաթա նա. զարէն, րուսիա հիւքիլմէթի թէրքի սիլահը ումուլի հագգընտա հէնի պիր լաեիհա իհզար (պատ. բաստի) իթմիշ իսէտէ, տիկէր թարաֆտան եհնէ Դանկայա րուս զըրհլարը կէօնտէրմէքտէ տիր : Պագալըմ պու լաեիհանըն տիկէր տէօվէթիլէր ինտիտէն նէ՝ էհէմմիլէթի օլաճագ, վէ նէ՝ իթմէթէ հասըլ իտէճէք :

— Ինկիլիզ միւլթէմիլիլէրաթ նազըրը Մ. Չէմպըրլէնին, ճէնուպի Աֆրիգաեա ազիլմէթիլտէն տօլայը, Պօէր ժէնէրալլարը Տըլարէլ վէ Պօթա իվրօբատա իճրա իտէճէլէրի խաթթը սիյահաթը թէրքէլ, Մ. Չէմպըրլէն իլէ Թրանս. վաալտս պուլուշուպ, քէնտիլ էհա. լիլիլիլէրին տիւշար օլտըղլարը սըլընթըր, վէ հալը հագրէթիլէր վէ խաթթիլիլ (ծաիրութիւն) քէնտի. սինէ անլաթաճագլարմըլ :

— Ախիլէն Չիլին Հու-Հան վիլալէթիլտէ գաթլ օլընալ իթիլին. կիլիլ միսիօնարլարըն գաթլը մէսէլէսինտէ, մէսուլ օլան մէմուր Նոյեմբըր 17տէ մէկքիլը վիլալէթին մէրքէզը իտարէսի օլան Չան Դա շէհրինտէ ինկիլիլ քօնսուսը հուզըրընտա իտալ օլընմըլ :

— Չին վէ րուսիա հիւքիլմէթի պէյնինտէ, Չէնկ-Թիւնկ-Ֆուտան, Դան-Սիլին մէրքէզը իտարէսի օլան թաթ-Եիլէն-Ֆու շէհրինէ գա. տաթ միւլթէտ (երկ սընլ) օլաճագ շըմէնտըֆէր խաթթը խուսուսըն. տա պիր շարթիսմէ իմզուլանմըլ օլտըղընտան թաւա կազէթաթ տէ. յօր քի, «պու շըմէնտըֆէր խաթթը, միւլթագպէլտէ Չինին թա իշէրիսինէ գատար եաեըլաճագ օլան խաթթարըն մէպտէսի օլտը. զընտան ճիւլէ իվրօբա հիւքիլմէթիլէրի իշիլն մուգիլ օլտըղըն պիզ էվլէլէն սէօլլէմիշ իտիլը :

— Յրանսանըն Սէն-Լօ շէհրինտէ Նոյեմբըր 19տա Լրպանէօն նամ ֆաթիլիա, զէվճի 36, զէվճէսի 34 վէ մալտուլարը, պիրի 7, տիկէրի 2 վէ էն քիլիլի 6 ալլըգ, ճիւլէսի տախի տրարթը. մանտա համըլ գարպօն (ածխային թթու) իլէ պօղուլմըլ օլտըղլարընտան՝ պու ֆաթիլտըն սէպէպի, զարր թէթտէն նէլէթ իթմէսինէ հիւքմ իթմէքտէ տիրէր :

ԹԻԻԽՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ, 13 Նոյեմբըր
ՉԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ	
Վալօն Լիպ. 57-58 հ.թ. 9.- / 9.50	
Արապա լիպ. 53-62 հ.թ. 9.- / 10.50	
ԱՐՔԱ,	
Վալօն 100 քիլո 9.40 / 9.50	
Արապա 45-50 լիպ. հ.թ. 5.60 / 6.-	
ՉԱՎՏԱՐ	
Վալօն 53-54 լիպ. 7.- / 7.20	
Արապա 7.- / 8.-	
ՖԱՍՈՒԼԻԱ 100 քիլո 18.- / 24.-	
ԵՈՒԼԱՅ	
Վալօն 100 քիլո 10.40 / 10.50	
Արապա հէթ. 5.- / 5.20	
ՄԻՍԻՐ	
Վալօն լիպ. 56-57 հէթ. 7.40 / 8.-	
Արապա լիպ. 56-57 հ.թ. 6.30 / 7.50	
ՏԱՐԸ լիպ. 57-58 հ.թ. 6.40 / 7.-	
Կիւնտէ 300-400 արապա վէ 40-50	
Վալօն կէլմէքտէ տիր :	
Վալօն մուլթէլէսի ալթուր ֆըրանքլէ, արապա կիլմիլլէ, նաբօլէօն 20-40 ֆրանք :	

ՏՕԲ. ՆԻՔՕԼԻՆԱ Մ. Է. ՔՕՎԱԶԷՎԱ

Շէհրիմիդտէ պու նամ իլէ միւլթէմա պիր մահիր թապիպէ մէվճուտ օլուպ, կէրէք խարիճի վէ կէրէք տախիլի խաթթալարընա պագմագտա տըր : շէր կիւն, տէօրտիւնճի ուշալթտա, ուլիցա Դօլոնիտէ քեալին 13 նօմէրօլը խանէօրինտէ հասթա գապուլ ի. իսիյօր : 3-5



Ի Լ Ա Ն

Եունանըն եէնի վաթօր գուլմանա. սընըն վաթօրլարըն հէր բազար իթթէսի կիւնլէրի լիմանմըզա միւլթալէթ ի. տուպ, սալը կիւնի պուրատան հարէքէթ իտիյօր : Սթանպուլ, Չանագ-Գալէյէ, Բիրէայա, Բաղրասա վէ Դօրֆուլա օգրայարագ Ալ-Սարանտայա գատար կիտէյօր : Եօլըլար Բիրէատա՝ Ալէքսանդրիա, Մարսիլիա վէ Ամիրիկա իշիլն ազթարմա օլապիլիլէր :

Վաթօրլարըն պէօյիլիլիլ, թէմիլիլիլ վէ չաթուղըլ վէ եօլըլարըն լանաթլըլը իշիլն կէօսթէրիլէն նէգաթէթ ճիւլէլէ մալիլմ օլուպ թագտիր օլընմագտա տըր : շիմտի ֆիլաթլարըն էվլէնիլիլիլտէ սայ վէ զալլէթ իթթիլիլիլ կիպի շէհատէթը մէթէպէրէ իլէ կէլէն ֆուգարալարա մուլթէլէթ իտէճէլիլիլ վատ վէ իլան իտէրիլ :

Բաղպէթիլ միւլթէրիլիլիլ տախի ֆըրսանթտան իսթիֆատէ իտէրէք, պիրիլիլ ուշաթըգտա, իսկէլէտէ Մանչեսթըր սօգաղընտա 396 նօմէրօլը եազըլալմիլլէ թէշիլիլ պուլլուրաճագլարըն իւլիտ իտէրիլ :

Մէզքիլը վաթօր գուլմանանըն ա. ճէնթիլ Ղ. ԼՈՒԼՈՒՏՕՐՈՒԼՕ

ՍՐԱՀ "ՍԱՆԴՐՈՒԼ"

Վալը գիշեր նասիւսա խմբին կողմանէ պիտի ներկայացուի Վարմիլը գիւնտան առեւիլի ոճիլը թատերգութիւն 3 արար :

Դիմաղաշարժ գաւնշտ 1 արար : Սովորական գին :

Փորձի դրուած է «Ֆաուսթ» եւ ՀԱՅՏԻՐԷՆ լեզուաւ «Վասպուրականի Հերոսներ»ը, որ մօտ օրէն պիտի ներկայացուի :

Оповорникъ Н. Драгулевъ
Печ. на Хр. Н. Войниковъ—Варна